

ԽԱՉԻԿ-ԱՊԵՐ

ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՔՎԵ

2022

1

*Թումանյանի քառյակները շատերին են լույս տվել,  
Շա՛տ շատերն են Թումանյանի քառյակներից օգտվել.*

*Սակայն քչերն են մտորել՝ Հայոց վշտի ծովի մեջ  
Լույսի, հույսի այդ Աղբյուրին ո՞վ է ուժ ու լիցք տվել...*

## *Ո՛վ անճառ Մին*

ԱՆԿԵՂԾ ԱՍԱԾ...

Անկեղծ ասած՝  
Կյանքից բացի ոչինչ չկա.  
Եթե փորձեք Կյանքից անդին  
Ինչ-որ մի բան գտնել անշունչ,  
Ապա ներքին խորքում, անշուշտ,  
Հյուլեների թրթիռը կա արարչական:

Անկեղծ ասած՝  
Միրուց բացի ոչինչ չկա.  
Եթե փորձեք Միրուց անդին  
Գտնել մի բան, որ չի սիրում,  
Ապա դրա վերին ծիրում  
Եթերային Մեր կգտնեք արարչական:

Անկեղծ ասած՝  
Աստծուց բացի ոչինչ չկա.  
Եթե փորձեք Աստծուց իսպառ առանձնանալ,  
Ապա այդ խոր մենությունը  
Հենց Երկնային Արքայության  
Նվիրական ու կորուսյալ  
Նեղ կաձանն է,  
Աստվա՛ծ վկա...

ԱՐԻԱՅԻՐ, ԱՐԻ ԱՆՅԻՐ...

Պիտի անցնել Արահատի արահետով,  
Որով անցավ Հավատարը արիաձին.  
Վահագնալույս Հզոր Աստղի ճառագայթով  
Պիտի քայլի և այսօրվա արիացին:

Արիացի՛, արիացի՛ր, արի անցի՛ր  
Տիեզերքի ոլորտներով վահագնաձիր:

## ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՆՅՈՒՄ

Այս ոլորտում մրցանակ են ստանում  
Կամ անցողիկ հաղթանակ:

Կա և անցում, որ նոր ոլորտ է տանում,  
Ուր չկա չափ, ժամանակ:

Հատիկներին անցումը վեր է հանում,  
Որումից հետք չի մնա:

ԱՆՈՒ-ԱՆԱ-ԿՈՉՈՒԹՅՈՒՆ  
(նախապատմական)

Հալղի բարձրագույն քրմերն ասացին.  
«Մշտնջենական Բարձրյալն Անանուն  
Շնորհում է մեզ ն՛ կյանք, ն՛ անուն...»,  
Բայց թոթովախոս նախնիք արիաձին  
Անտես Բարձրյալին կոչեցին Անու,  
Ցուլեր ու ձիեր զոհաբերեցին,  
Շինեցին պարիսպ, տաճար անվանի,  
Պաշտեցին Նրան, փառաբանեցին՝  
Ասելով. «Ա՛յս է կացարանն Անի»:

Դարերը թռան, ժամանակն անցավ,  
Նոր աստված ծնվեց ու նոր ժամանակ,  
Անին նոր տաճար, պարիսպ ունեցավ,  
Եկեղեցիներ, մատուռ անքանակ:  
Եվ հետնորդները նախնյաց արիաձին  
Սև հանդերձներով կազմեցին բանակ,  
Ողբասացությամբ զոհաբերվեցին  
Անի քաղաքի պարիսպների տակ:

ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՎ

Իրավ է ասված. «Ո՛չ միայն հացիվ»,  
Սակայն այդ խոսքով առաջնորդվողներ  
Մեկ-երկու հոգի կգտնեք հազիվ.

Եթե ձեր հոգու աստվածը փողն է,  
Նրա՛նց մատուցեք հարգանք ու պատիվ...

## ՀՈԳՈՒ ԴԱՍԵՐԸ

Մի՛ իւեղճացեք նրանց կողքին, ովքեր տեր են այս կյանքում.  
Ստրուկնե՛ր են նրանք նախկին՝ դժգոհ իրենց տերերից:  
Ամեն նոր կյանք՝ փորձություն է, իսկ կյանքերի արանքում  
Արարչածին հոգին անհագ տենչում է նոր դերերի:

Մի՛ նախանձեք հարուստներին, որ փող ու ինչք ունեն ճոխ.  
Նախորդ կյանքում աղքատ էին, անոթի և ընչագուրկ,  
Իսկ նրանք, որ այսօր չունեն ո՛չ ճոխ դրյակ, ո՛չ էլ փող,  
Իրենց նախկին կալվածքներում շրջում են լոկ երագում:

Ամեն մի կյանք մի նոր դաս է հոգու համար աչքաբաց,  
Եթե անգամ տգիտության մի խուլ վայրում դա անցնի.  
Եթե անգամ մարմին ու միտք լինեն մոլոր ու հարբած՝  
Հոգու դրած նպատակն է, որ այդ դա՛սն էլ գա անցնի:



## ՀՈԳՈՒ ԳԱՆՁԵՐԸ

Անշուշտ, գայլ չէ աշխատանքը,  
Չի՛ փախչի անտառ,  
Բայց սրընթաց ժամանակը  
Թռչում է անդառ:

Ուստի, գործդ այսօր չանես՝  
Վաղն ուշ կլինի,  
Լավ է հոգուդ համար բանես,  
Քան թե անունի:

Հոգուդ գանձերն անջնջելի  
Ընդմիջտ կհիշես,  
Թեև առաջ դու մեկն էիր,  
Հիմա՝ ուրիշ ես:

## ՃՇԳՐՏՈՒՄ

Ինձ մի՛ կոչեք «սանյասին».  
Հոգիս հին է ավելի,  
Քան աննկուն Սյունյաց սյուն:

«Շիվա» չասե՛ք իմ Աստծուն,  
Այլ «Հինավուրց», Շիվինի՝  
Կեռ-խաչ ու գլխին սինի:

Ինձ մի՛ կոչեք «վարժապետ».  
Դեռ նոր ելա մտորից  
Ու դեռ նոր եմ աշակերտ:

Շրջանն անվերջ ընդլայնվում,  
Իսկ ես սուզվում եմ նորից,  
Դեպ անհատակ, անհուն կետ:

## ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ես չեմ սիրում խոշոր քաղաքները,  
Եռուզեռն ու եռքը քաղաքակիրթ.  
Սիրում եմ, երբ շուրջս խաղաղվել է,  
Եվ դաշն է իմ հոգին տիեզերքին:

Հսկա քաղաքներ կան ավազի տակ  
Եվ բազում մահաբեր զենք ու սարքեր,  
Բայց եղել է և կյանք պարզ ու շիտակ,  
Եվ բարձր մի լեռ է մարդուն փրկել:

## ՆՄԱՆԱԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Գերքաղաքը, գետնատարած ճիվաղի պես անխտով,  
Նվաճում է դեռ աննվաճ տարածքները մոտակա՝  
Երկաթակուռ շերեփների ժանիքներով անզգա  
Անդորրակյաց քար ու հողի թոք ու աղիք խառնելով:

Կարիճները ինքնախայթմամբ չորանում են բներում՝  
Մոտ սողացող նմանակի հռնդունից սարսափած:  
Դարակազմիկ ժամանակի սահմանները չափչփած՝  
Քաղաքակիրթ Մարդն ինքն էլ է ինքնախայթվում, չորանում:

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Գարնան կանաչ թարմ խոտն արդեն  
Ծիլ է տվել խաշամի տակ,  
Փխրուն հողի տաք հոտն արդեն  
Ծիր է տվել ծառերի տակ:

Փոցին անցյալի բեռ է կիտում, բահը ցնցվում՝  
Խոնավ հողից սարսուռ առած,  
Կաշաղակը մոտ-մոտ անում, կեր է կտցում  
Արբունքներում գետնատարած:

Այգեպանի երակների արյան եռքում ու հայացքում  
Նոր սահման է ուրվագծվում,  
Այգուց այն կողմ՝ քար ու դռտ նոր տարածքում,  
Գալիք բերքի հույսն է լցվում:

## ՏՈՆԱԿԱՆ ՄԱՅԻՍ

Մայիսամեկյան առավոտը պայծառ է,  
Թավ կանաչում կայծկլտում են արևներ.  
Բազում ծաղկանց բույրն անուշ ու անծայր է,  
Հողի մշա՛կ, քեզ տոնական բարևներ:

Մայիսամեկյան այգաբացի անդորրում,  
Համերգում են վաղ արթնացած թռչուններ.  
Գարնանային նոր զարթոնքի այս օրում,  
Հոգու մշա՛կ, քեզ տոնական ողջույններ:

## ՕՏԱՐԱՅՈՒՄ

Ամեն օր արևը շողում է,  
Ամեն օր գեփյուռը խաղում է,  
Ամեն օր գվվում են սարքերը,  
Ամեն օր պայթում են արկերը:

Ամեն օր աղբյուրը ցայտում է,  
Ամեն օր ձկները խայտում են,  
Ամեն օր արյուն է ու ճիչ է...  
- Մա՛րդ ասածո, ուզածդ ի՞նչ է:

«Ո՛Վ ԱՆՃԱՌ ՄԻՆ...»

Թումանյանի քառյակները շատերին են լույս տվել,  
Շա՛տ շատերն են Թումանյանի քառյակներից օգտվել.  
Սակայն քչերն են մտորել՝ Հայոց վշտի ծովի մեջ  
Լույսի, հույսի այդ Աղբյուրին ո՞վ է ուժ ու լիցք տվել...



ՇԱՐ

Եթե ականջիդ հասել է շարն ու շարական-երգը,  
Ապա հույս կա, որ մի օր կբացես սրտիդ կողպեքը:

Նա, ում հուզել է մեծ Կոմիտասի ձայնի դողանջը,  
Միշտ բաց կպահի շար ու դարի դեմ սիրտն ու ականջը:

## ՀՈՐՄ ՋԱՆՔԸ

Հայրս դժվար կյանքով ապրեց, բայց երգով էր սիրտը լիքը,  
Ուրախ, տխուր հանդեսներին մեջբերում էր Պարույր Սևակ.  
Անգիր այնքան տողեր գիտեր, որ չէր հիշի Սևակն ինքը,  
Ես ձեզ վկա՝ հորս ջանքը չի մնացել անհետևանք...

## ՆԵՐԲՈՂ ՄԱՀԻՆ

Ո՛վ մահ ամենահաս, հասնում ես դու մարդուն  
Եվ վազանցում նրան, որտեղ էլ որ լինի,  
Շտկում նրա կուզը, հոգսի բեռը հարթում,  
Համատեղում անգամ անհամատեղելին:

ՑԱՎ

Ցավալի բան է ցավով ապրելը,  
Ցավին սովորել՝ ցավին կապվելը.  
Ամեն ցավ թեև իր վախճանն ունի,  
Բայց վախճան չունի ցավով խաբվելը:

## *Կատակի կարգով*

ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Անքուն մնալով՝ գիշերվա կեսին  
Դժգոհ դիմեցի իմ վերին Ես-ին.  
«Դեռ ինչքա՞ն պիտի ես անքուն մնամ,  
Ժամն է, որ շնչեմ քնածի նման...»

Եվ պատասխանեց իմ վերին Ես-ը,  
Երբ վաղուց անց էր գիշերվա կեսը.  
«Չէ, չէ, մի՛ քնիր, խոսելու բան կա,  
Մեծ գաղտնիք պիտի հայտնեմ այս անգամ»:

...

Վերջում շնջաց նա իմ ականջին,  
Երբ մոտ էր ժամը աքլորականչի.  
«Դեհ, հիմա հանգիստ կոպերդ փակիր,  
Որ առույգ լինես արևածագին»:

Հնազանդվեցի ու քնով անցա,  
Գաղտնիքը ո՞րն էր, ծեփին մոռացա...

## ԻՆՉՊԵՍ ՎԻՆԵՏՈՒՆ

Մի երկիր ունենք՝  
Աշխարհը չունի,  
Եվ դրսի աշխարհ,  
Որ երկիր չունի:

Բայց այս ամենը  
Հեչ նշան չունի,  
Եթե նմանվենք  
Ազատ թռչունի,

Ինչպես առաջնորդն ապաշիների՝  
Վինետուն, որդին մեծն Ինչու Չունի:

100-ԸՂ ԿԱՊԻՒՎ,

Մարդանալուդ ճամփին,  
Չմոռանաս, խնդրեմ,  
Թե ով մատով բրդեց  
Թեթևակի:

Անգամ եթե նորից  
Ծնես մի նոր Դարվին,  
Մեկ է, մի նոր մատի  
Հարց կծագի:

## ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՆՇԽԱՐ

Հարահոսը «Ֆեյսբուքյան»  
Ամեն օր ու ամեն ժամ,  
Խլում է մեր էներգիան  
Անհետևանք ու դաժան:

Մակայն այնտեղ՝ վերևում,  
Կուտակվում է ամեն բան,  
Ու, թեև չի երևում,  
Կերտվում է մեր ապագան:

Եվ բոլորս այդ գործի  
Մարտիկներն ենք անձնագոհ՝  
Ամեն մեկս իր փորձի  
Բեռով ու իր երազով:



## ԼԻԱԿԱՏԱՐ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի մեր երկրի ներսում  
Հանկարծակի չմնանք անտեր,  
Մեզ ի՞նչ է պետք, ի՞նչ ենք ուզում.  
- Մի ոստիկան ու մի տերտեր:

Մեկը ներման կրենթարկի,  
Երբ շատանան մեր մեղքերը,  
Մեկն էլ բերման կրենթարկի՝  
Պինդ փակելով դուռ-փեղկերը:

Իսկ թե ինչպես պիտի վարվենք  
Այդ երկուսի միջին դիրքով՝  
Պարզ է. պիտի ապահովվենք  
Օրենսգրքով ու Սուրբ գրքով:

## ՊԱՇՏՈՆԱԿՌԻՎ

Վերևն աստված, ներքև դուք... Թե՞ հակառակն եք կարծում.  
Վերևում տեր կա-չկա, դուք եք «տերերն» էս ցածում:  
Դուք շատվոր եք, տեղը՝ քիչ, ուստի տեղի սուղ հարցում  
Մեկդ մեկիդ տակ փորում, իրար կոկորդ եք կրծում:

Իսկ երբ հասնում եք մեկին, որի «դեմ հեչ խաղ չկա»,  
Որի կողքին բազմելու հարմար աթոռ, տեղ չկա,  
Դուք դառնում եք մանկլավիկ, զինակից ու կուսակից  
Եվ նմանվում աննամուս ու հաճկատար աղջկա...

«ՈՒՂՏԻ ՊԱՐԸ ԿԱՄՐՋԻ ՎՐԱ Է ԲՈՆՈՒՄ»

Հայերն էլի ծռտի-պռտի  
Բաներով են զբաղված.  
Թուրքն ուզում է ջարդի, փրթի,  
Իսկ հայն՝ անզեն ու շաղված:

Նախագահը ուղտի պարով  
Կամուրջներ է փլցնում՝  
Մկան խաղով, քառասուն տարով  
Թալանի գործ կպցնում:

Կուսակցական անբանները  
Մտնում ու դուրս են գալիս,  
Մեծ պատառներ գրպանելը  
Քուն ու դադար չի տալիս:

Պառավները ցնդած, լալկան  
«Հալելույա» են երգում,  
Պոետ լինի, թե գիտնական՝  
Իրենց կաշին են փրկում...

«ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ»

Եկավ ու հարց տվեց պապին Դանիելը.

- Պա՛պ, դժվա՞ր է հողից շաղգամ հանելը,  
Որ՞ ողջ տնով, ինչպե՞ս ասին պարտեզում,  
Հա՛ քաշքշում, հողից հանել են ուզում:

«Դժվա՛ր հարց է...», - մտածեց պապն այս անգամ,  
Լավ չէր հիշում, թե ինչ ասել է՝ շաղգամ.  
Կարմիր տա՛կն էր, բողկազգի՞, թե՞ ճակնդեղ,  
Ո՞վ էր ցանում, ինչի՞՞ համար և որտե՞ղ...

Հա՛, ցանում էր դա արտատեր մի պառավ,  
Մանուկ Դավիթն էկավ, քանդեց ու կերավ:  
Զարմա՛նք բան է... Այդ պառավը՝ նույն ինքը,  
Պահում էր և Սասնա Տան մեծ գաղտնիքը:

Իսկ հիմա մենք ո՛չ գաղտնիք ենք իմանում,  
Ո՛չ էլ գոնե արտում շաղգամ ենք ցանում...

ԱԳՌԱՎԱՔԱՐԻՑ ԱՌԱՅԺՄ ՉԱՐԺԵ ԴՈՒՐՄ ԳԱԼ

Եթե հանկարծ Փոքր Միերն արթնանա,  
Ի՞նչ համտեսի, որ ուժ առնի, կշտանա.

Սև թելերով կարտոֆի՞լը հիվանդոտ,  
Թե՞ շուկայի կիվի՞ն օտար ու բրդոտ,  
Լոլի՞ կ ուտի՝ կեղևի տակ հաստ կաշի,  
Թե՞ ջերմոցից «փայլուն» վարունգ դուրս քաշի...

Ինչ էլ ուտի, միշտ դուրս կգա վնասով՝  
Մթերքի հետ կերած թույնի իր մասով.  
Դեռ մասուրի կեսն էլ չկա ցորենը,  
Սակայն տեղով թույն է դառել պարենը:

## ԲԱԼԼԱԴ ԳՆԴԵՎԱԶՑԻ ՌԵՎԱԶԻ ՄԱՍԻՆ

Հյուր էր եկել գնդեվազցի Ռևազը  
Թեթև ծանոթ երևանցի Երվանդին:  
Շա տ սիրուն էր զարդանախշած էն վազը,  
Որ դրված էր Երվանդենց տան սերվանդին:  
Էլ չէր կարող վազից իր ուշքը շեղել,  
Մանավանդ, որ մեջը կար և զարդեղեն:  
Ծանոթները մի երկու շիշ խմեցին,  
Երկար-բարակ զրույց արին, ննջեցին:  
Առավոտյան, երբ Երվանդը արթնացավ,  
Իր աչքերին չհավատաց, զարմացավ:  
Չքացել էր բաժակակից Ռևազը,  
Չկար նաև ոսկե զարդով լի վազը:  
Հենց նույն օրը գնաց հասավ Գնդեվազ,  
Ասին՝ գյուղում չենք ունեցել մենք Ռևազ:  
Էլ ի՞նչ աներ... Պիտի քներ նա գյուղում,  
Տեղ բացեցին գյուղապետի նկուղում:  
Լուսաբացին գյուղում շրջեց, հիացավ,  
Սարի օդով սիրտը գյուղին միացավ:  
Չքնաղ էին և՛ սարերը, և՛ Արփան,  
Նորից դեպի գյուղը բերեց իր ճամփան.  
Կրկին մտավ գյուղապետի հարկի տակ,  
Դիմեց նրան, ոչ այն է լուրջ, ոչ կատակ:  
– Շատ լավ գյուղ է ձեր կանաչ Գնդեվազը,  
Չկա-չկա, թող ե՛ս լինեմ Ռևազը:  
Գյուղապետը նախ մի թեթև շիվարեց,  
Բայց Ռևազին գնդեվազցի համարեց:  
Նոր Ռևազի քրտինքով ու պայքարով,  
Երկու տարում նոր տուն շինվեց տուֆ քարով:  
Հիմա արդեն գնդեվազցի Ռևազը  
Այդ տանն ունի իր նոր սերվանդն ու վազը:

Լուր տանք հիմա էն խաբերա «Ռնազից».  
Ասում են, թե մեռավ ռուսի կվասից...

## ՓՈՂԻ ՔՄԱԿԸ

Ի՛նչ մոլորություն... Փողի քսակը  
Բարձրացնու մ է մարդու հասակը.  
Ո՛չ, հաստացնում է փորն ու կզակը  
Եվ մարում գլխի աղոտ պսակը:

Մարդը դառնում է նենգամիտ, կծծի՝  
Որքան էլ կեղծի ու «բարեգործի»:  
Շատ քչերն են, որ հաղթում են փողին  
Եվ մաքուր խղճով հանձնվում հողին:

Մնացածները խիստ զարմանում են,  
Երբ այն աշխարհում «չփլաղանում են»,  
Եվ հոգին դատարկ, առանց վաստակի  
Իր տառապանքն է կրում խստագին:

Կհասնե՞ն փողով դրախտի դռան...  
Այո, երբ յոթ էշ միասին գռռան:



## ԻԶՈՒՐ ՁԱՆՔԵՐ

Հապա տեսեք ո՛նց է ապրում աշխարհում

Մեծահարուստ գործարարը, վաշխառուն.

Կուտակածը հո ներսու՞մ չէ, դրսում է,

Բայց նա էլի անհագ կիտում, դարսում է:

Իսկ մաշկի տակ որքան ճարպը հաստանա,

Մեկ է, հոգին դրանով չի կշտանա:

22.02.2016թ.

ԱՐԴՅՈՔ ՈՎՔԵՐ ԵՆ...

Արդյոք ովքե՞ր են ձեզ հայտնի մարդիկ.  
Մի քանիսն այսօր երեսփոխան են.  
Այժմ հագել են կարճ անդրավարտիք,  
Լողափներն իրենց ոտքի կոխան են:

Մա մեկտեղել է կրծկալ ու շաքար,  
Մա էլ կիսում է բոլորի շահը:  
Համբերանքը ձեր՝ անհատակ տակառ,  
Եվ անհայտ՝ դրա լցվելու պահը:

Արդյոք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են.  
Մերժիկը վկա՝ օլիգարխներ են:

Մեկն իր առյուծի թաթով տարել է  
Բնության տված ջուրն ու ցեմենտը,  
Մեկն էլ հանքերից ուզածն առել է,  
Եվ հիմա «գրանդ պրեզիդենտ» է:

Արդյոք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են.  
Ռոբերտը վկա՝ օլիգարխներ են:

Մեկը արջերին «մեղր» է մատուցում,  
Որ նրանք հանկարծ դուրս չգան որջից,  
Մյուսն իր գործած մեղքն է հատուցում՝  
Խրատներ տալով սատանի փորձից:

Արդյոք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են.  
Լևոնը վկա՝ օլիգարխներ են:

Չարժե՛ թվարկել անուն առ անուն,  
Թե այսօր ով է թոզ-դուման հանում,

Քանզի, հենց փոխվեն դարն ու կապերը,  
Կհիշվի միայն խաչիկ-ապերը:

Արդյոք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են.  
Երկինքը վկա՝ Լուսակիրներ են:

Բայց ո՞վ խոսքերս ճիշտ կհամարի,  
Կկշռադատի, կիմաստավորի...  
Չէ՛, թող դա ըն անի համադրումը,  
Եվ լուծի այդ բարդ հարցադրումը:

Հիմա ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են.  
Բարձրյալը վկա՝ կույր ու խուլեր են...

ՌՈՆԴՈ ՍԻՐՈ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ

Մի առվով հոսենք, սե՛ր իմ, մի առվով,  
Գուրգուրող լինենք և իրար փարվող,  
Նույն ճակատագրով և հոգսով տարվող,  
Մի առվով հոսենք, սե՛ր իմ, մի առվով:

Նույն երգը երգենք, սե՛ր իմ, նույն երգը.  
Թող միահյուսվեն մեր երգն ու ձեռքը,  
Գուցե մեզ լսի ողջ տիեզերքը,  
Մի առվից լսի գուցե մեր երգը:

Նույն տեղում շինենք, սե՛ր իմ, տանիքը,  
Մեր անկողինը ու մեր բաղնիքը,  
Հոսանքը, գազը, գլխին գալիքը,  
Մեր ջրի երթը, մեր ընտանիքը:

Փայփայենք, սե՛ր իմ, մեր արժանիքը,  
Մեր առնելիքը ու մեր տալիքը,  
Որ սիրով կերտեն պայծառ գալիքը  
Մեր զավակներն ու իրենց բալիկը:

## ՆԵՐՈՂԱՄԻՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մի՛ նեղացեք սողանքից,  
Համառ ձեր էջն եք քշում,  
Բնությունն էլ չի խորշում,  
Որ հարմարվի ձեր վարքին:

Մարդը հսկա շերեփով  
Փորփրում է անխափան,  
Ջուրն էլ գտնում է ճամփան  
Եվ խոխոջում նոր ափով:

Հանք ու ճամփա եք բացում,  
Հատում լանջի ծառերը,  
Պայթեցնում ժայռերը,  
Շքեղ պալատ կառուցում:

Մոլորակն էլ պտույտով  
Ծանրութեթն է անում  
Եվ ապահով տեղ տանում  
Ձեր խարխլած լանջ ու հող:

Մի՛ մեղադրեք սողանքին.  
Երբ դուք լեռ եք գլխատում,  
Բնությունն էլ ձեզ դատում  
Ու... հանում է արանքից:

Եթե մարդը իր բահով  
Փորեր միայն իր այգին,  
Հանգիստ կապրեր ահագին՝  
Սողանքներից ապահով:

Մարդուց կարծես թե կարգին

Խելամիտ է մրջյունը.  
Երբ պատրաստ է իր տունը,  
Էլ չի փորում անհարկի:

«ԱՆՄԱՀ» ՏԵՄԻԼ  
(պարողիա)

Թող ոչ ոք «փող չլվանա» ձեզնից բացի,  
Ուրիշ ոտքեր ձեր բիզնեսին թող մոտ չգան,  
Եվ ձեր ճապաղ հայացքներում հաբրգածի  
Ձեր ժառանգը թող տեսնի իր ցոփ ապագան:

ՀԱՆՐԱՔՎԵ

Գոչում, կանչում, պահանջում եմ՝  
Մեզ պետք է մեծ ՀԱՆՐԱՔՎԵ.  
Հայությունը նահանջում է  
Եվ վերանում ծվեն-ծվեն:

Բավ է, հայե՛ր, ոտքի՛ ելեք,  
Մեզ պետք է նոր ՀԱՆՐԱՔՎԵ.  
Ծովանալով ալիք-ալիք՝  
Հավաքական ու՛ժ ցույց տվեք:

Առաջնորդնե՛ր, գեներալնե՛ր,  
Պահանջեցե՛ք ՀԱՆՐԱՔՎԵ.  
Գյուղ ու քաղաք, ջահել ու ծեր,  
Բերե՛ք ձեր մասն ու ձեր քվեն:

Որպես մի նոր «Ձենով Օհան»՝  
Խորհուրդ ու ձայն եմ ձեզ տվել.  
Թողե՛ք մահակ ու հրահան,  
Նախ պահանջեք ՀԱՆՐԱՔՎԵ:

## ԲԱՌԱՍԼԱՑՔ

Բառերը կանչում են մեզ ետ՝  
Նախապատմական անցյալ,  
Գնում ենք՝ մնալով անգետ,  
Ազգովի խեղճացած, հյուձյալ:

Իսկ եթե վեր սուրանք, մեր հին  
Բառերը հրթիռներ դարձրած,  
Ո՞վ պիտի մեր ձեռքը բռնի,  
Խափանի խոյանքը վերսլաց:

Մլանա՛նք մեր ուղով բարձրյալ-  
Կարո՞ղ են՝ թող սուրան մեզ հետ,  
Սակայն մենք, միայն մե՛նք դարձյալ  
Կբացենք Լույսի արահետ:



## ԲԱՐԵՇՐՁՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ աշխարհի կրոններն են ճշմարիտ,  
Ո՛չ էլ դրանց աղանդները մեկուսի.  
Բնությանն ու մարդու հոգուն անհարիր  
Աննպատակ քարոզներ են կեղծ ու սին:

Ոսկեդարի լուսավորյալ մատույցում  
Կհիշվի սուկ ներողամիտ ժպիտով,  
Թե ի՛նչ էին կրոնները մատուցում  
Ամեն պատեհ ու անպատեհ առիթով,

Կարևոր չէ՝ միտումնավո՞ր, միամի՞տ,  
Թ՞ե ըստ անհայտ դպիրների գրվածքի.  
Սուտը՝ սուտ է, և սուտը վեր կհանվի՝  
Ըստ Բնության բարեշրջուն դրվածքի:

## ԴՌՆԵՐՆ ՀՈՒՍՈ

Ո՛չ, չեն փակվի դռներն հուսո  
Եվ Կիլիկիո դուռ Քեսաբը.  
Հայաբարբառ խոսք ու լույսով  
Հար կծաղկի և այս ավիր:

Մոլեգնել է խավարը բիրտ,  
Փորձել գոցել դուռը հույսի,  
Մակայն հայի ամեն մի սիրտ  
Մի բաց դուռ է հույս ու լույսի:

Իսկ երբ խավարն ահաբեկված  
Թունոտ նետեր հեռարձակի,  
Բյուր հույսերով միաշեղբված՝  
Կցուլա մեր Թուր-Կեծակին:

## ՀԱՅԻ ԲԱԽՏԻ ԱՆԻՎԻ ՇՐՋԱՆԸ

Թուրքերը ահ չունեն Հիսուս Քրիստոսից.  
Չարին դեմ չի գնա, ու ը մնաց, թե հաղթի:  
Վախենում են նրանք հայոց մեծ Էպոսից,  
Եվ շանթեր արձակող հայ դիցերից հալդի:

Հարյուր դար է տևում շրջանը մեր բախտի,  
Հիսուն դար վայրեջջ էր, և վերելք կլինի.  
Մեր բազկին ուժ կտան Արարատյան Հալդին  
Եվ խավարը շամփրող Սյունյաց դից Շիվինին:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՂԱՍՈՒԹՅՈՒՆ

Գինին ջուր է, ջուրը՝ գինի,  
Ջայլամի ձուն՝ սերմացու,  
Ամեն ձոր ու ատվում «մինի»  
Հիդրոկայան է բացվում:

Ջորին ծույլ-ծույլ ջուր է ճողփում,  
Գոմեշը լերկ սար հանվում,  
Տանուտերը դուռ է կողպում,  
Տնատերը տաքհանվում:

Տաքհանվածը իր դիզածով  
Ժամ է շինում գովական,  
Անոթի շունն իր լիզածով  
Գոհ է անշուշտ բավական...

## ԽՈՊԱՆ

Հայերը գնում են խոպան.  
Սահմանը հենց անցար՝ խոպան է,  
Քանի որ այս դարում չկան  
Հեռավոր ու մոտիկ ճամփաներ:

Գնացե՛ք, բարի ճանապարհ,  
Մշակե՛ք խոպանը օտարի,  
Օրվա ձեր հացը հանապազ  
Վաստակե՛ք քրտինքով արդարի:

Դրախտի պարտեզի նման  
Թող ծաղկի՛ օտարի խոպանը,  
Ի՞նչ փույթ, որ գերի կմնան  
Արարատն ու Նոյան տապանը...

## ԽՈՅԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ձայն բառքառոյ անապատին»  
Դեմ է առել խարխուլ պատի,  
Եվ այդ պատը չի՛ մնա պատ,  
Չի՛ պակասի մի նոր ճակատ:

Պիտի անխոնջ խոյահարեմ,  
Ա՛զգ իմ, ուղին քո հարդարեմ:  
Թող ինձ կոչեն «պնդաճակատ»,  
Սակայն ազգս հասնի Գագար:

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

«Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ  
Պատել, պայծա՛ռ Նաիրի...»  
Վ. Տերյան

Եվ այսուհետև, և այնուհետև  
Մնունդ չի գտնի՝ ձեր միտքը թեթև:

Լույսը ձեր հոգվույն քիչ-քիչ կմաշի,  
Ինչպես բալզակյան շագրենի կաշի:

Էլ դուռ չի բախվի, ջահ չի վառվի էլ,  
Զի անհույս եք դուք, անսեր ու անել:

Կախարդել են ձեզ շեղված գանգերը  
Եվ ավազածածկ, խեղված գանգերը:

Չեք ունենա դուք ողբասա՛ց անգամ,  
Զի կարծրացել են ձեր սրտերն անկամ:

Ճենճոտ խուցերում սպասեք դատին  
Տիեզերական Արդարադատի...

## ՄԻ՛ ԵՐԿՅՈՒՂԻՐ

Մի՛ երկյուտիր, բարեկա՛մս, չէ՞ որ հայ ես ծնվել դու,  
Հայոց գուլալ աղբյուրների ակունքից ես սնվել դու.  
Որքան էլ որ քոչվոր մի ցեղ նավթ խառնի քո արյունին՝  
Ճերմակաթույր կայծքարերի պեծերով ես թրծվել դու:

Մարմնով եթե տկարանաս, հոգիդ պահիր աննկուն՝  
Զավթիչների դեմ-հանդիման, կրակոտ ու բռնկուն.  
Միայն այդպե՛ս կմնաս հայ՝ նման արծվի, կորյունի,  
Որի ահից ճողոպրում են բորենիներն արնախում:



## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Պաշտպանվել ենք, ինչպես կարգն է՝  
Շատից քիչը, քչով՝ շատ,  
Կորցրել ենք բյուր քաղաքներ՝  
Տուշպա, Անի, Աշտիշատ...

Քոչվոր ցեղերն ազգուտակով  
Հեղեղվել են մեր երկիր,  
Նեղել, ծաղրել ու կատակով  
Մեզնից ընտրել թագակիր:

Միշտ եղել են հարուստ հայեր,  
Որ սիրել են առևտուր,  
Օտարներին սիրաշահել,  
Հասել են մինչ «Բարձր Դուռ»:

Հիմա էլի նույնն է, գիտե՞ք.  
Նեղում են մեզ ու լլկում,  
Իսկ դուք հարուստ մի հայ գտեք,  
Որ ազգ ու հող է փրկում...

ԲԱՎ Է

Բա՛վ է, ինչքան տրտնջացիք,  
Դրա՛ համար չեք ծնվել.  
Ձևավորեք հստակ կարծիք,  
Ազգին տվեք ձեր քվեն:

Բա՛վ է, ինչքան խորհուրդ արիք  
Ու մերժեցիք իրարու.  
Խոսք ու վեճից չկա՛ բարիք,  
Գ՛ործն է բարիք արարում:

Լսեք ձայնը ժողովրդի՝  
«Ձայն բազմաց՝ ձայն Աստծո».  
Բա՛վ է մնաք խղճուկ կաթիլ,  
Միաբանվեք, դարձեք ծով:

## ԱՆՄԱՔՈՒՐ ԵՌՅԱԿ

Չքմեղանու՛մ է եռյակն անմաքուր.  
Մեկը կեղտերն է վերհիշում անցյալ,  
Մեկը հայ ազգին գավթիչ է կարգում,  
Մեկն էլ, որ հայ է, զիջու մ է դարձյալ:

Խաղաղասե՛ր է թուրքը ձևանում  
Եվ ուզում է, որ հայը չկռվի,  
Ռուսն էլ ձեռքերն է կրկին լվանում,  
Բայց կողքից օգնում, որ թուրքը զինվի:

Իսկ իրերն իրենց անունով կոչել՝  
Եռյակն, իհարկե, չի համարձակվում.  
- Թու՛րքն է միշտ զենքով տեղից տեղ քոչել,  
Եվ թուրքն է կրկին զինված հարձակվում:

Հայն իր երկիրն է պաշտպանել ուզում,  
Եվ հա՛յն է թուրքի խուժումից տուժել:  
- «Խաղաղարարնե՛ր», կողպե՛ք ձեր լեզուն,  
Զոհին մի՛ ստիպեք դահճին հանդուրժել:

## ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Արցախը Հայաստան է և վե՛րջ...  
Դուք այդ ու՛մ կասկածն եք փարատում:  
Ով սիրում է հայրենիքն անկեղծ՝  
Բառերով օղը չի թրատում:

Արցախցին բռնել է բահի կոթը՝  
Մարմնագույն, ինչպես իր ձեռքերը.  
Խնամում է այգին, հնձում խոտը,  
Իսկ որդին պահում է դիրքերը:

Ձեր գոչունը նա չի հասկանա,  
Շիվարած կնայի ձեր դեմքին,  
Ոչ մի բառ չի ասի, սակայն նա  
Իր սիրով գորեղ է ամենքից:

Աչքադրել է որդուն հարսնացու,  
Վստահ է, որ թոռնիկ կունենա:  
Իգու՛ր եք փողհարում, կասկածում.  
Իր հողը սիրում է միայն նա:

## ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՔՎԵ

Իշխանական, կուսակցական դասն այսօրվա  
Հայոց երկրին, ժողովրդին ի՞նչ է տվել.

Դատարկվող ու վարկով ապրող երկիր սովյալ  
Եվ կասեցված ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ:

Երկրի դեկը ձեռքին պահող խավն այսօրվա  
Ինքն իրեն ու օտարներին ի՞նչ է տվել.

Ինքնամեծար, նյութապաշտ խաղ ամենօրյա  
Եվ անտեսված, չկայացած ՀԱՆՐԱՔՎԵ:

Իսկ երբ շուտով կանգնենք դառը փաստի առաջ,

Եվ հարկ լինի մեղք ու սխալ հերթով թվել,

Ափսոսանքով ամեն մի հայ տառաճանաչ

Կփաստի նախ չկայացած ՀԱՆՐԱՔՎԵՆ:

Եվ մի՛ ասեք, թե արել ենք հանրաքվե

Մեր առանձին տարածքների երկու մասում:

Մի թե հենց այդ պատճառով չենք մենք հայտնվել

Կովի, վեճի, բախումների այս պիղծ փոսում:

Արցախն արդյոք չդարձրի՞նք կովախնձոր՝

Ներքաշելով հաշտարար ու խաղաղապահ...

Քանի ուշ չէ, կայացնե՛նք թեկուզ այսօր

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ անվերապահ:

## ԽՈՍՔ ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Թող առաջին նախագահը  
Չվերսկսի իր հին խաղը,  
Նախագահին էլ նախավերջին  
Թող տոն չտա դատ ու վեճին:  
Երեքո՛վ եք եփել ճաշը՝  
Նույն սխտորն է ու նույն խաշը:  
Նույն ալանն է ու թալանը,  
Նույն սատկած էջն ու փալանը...

Ալբիոնի արքայագնը չարալեզու՝  
Առավել նենգ բարակամիտ օբամայից,  
Իր պապերի նախնյաց հետ է կապը խզում՝  
Ցուցադրելով ցեղասպան դեմքն ականայից:  
Կխորտակվե՛ն Սթոունհենջի քարերը ցից՝  
Վերածվելով գետնին պառկած շիրմաքարի,  
Կարշավեն բիրտ ցունամիներ օվկիանոսից,  
Չի ծնվի նոր Արթուր արքա, որ պայքարի:  
Բայրոնի վեհ, ըմբոստ հոգին կսավառնի  
Անեզրական օվկիանոսի ջրերից վեր,  
Բայց Ալբիոնի չքնաղ կղզին վեր չի հառնի  
Ապրողների հայացքի դեմ լուռ, անտարբեր:  
Չարի՛ իշխան, հասար վերջին հանգրվանիդ,  
Սպառելով «հունարներդ» մահատարած՝  
Քո զոհերի բազմամիլիարդ քարավանի  
Երթի ներքո քարե կարկամ շիրիմ դառած...

### 3D REALITY

Փոթորկածուփ «Անվավերյան» օվկիանոսի  
Լեռ ու ժայռոտ մի կղզյակում «Հայասաչէ»,  
Բնիկները, վաղուց կիսված երկու մասի,  
Օրհասական ու անզիջում մարտի մեջ են:

Այո-դավան հայասները իշխող դասի,  
Պարսպապատ դղյակներում պատսպարված,  
Ոչ-ադավան հայասներին դրսի մասի  
Հասցնում են եթերաձիգ լրահարված,

Իբր չկա կոկորդիլոս ու շնաձուկ,  
Եվ որ կյանքը կղզում անշեղ կլավանա,  
Եթե հարկերն ավելացվի ու անցնցում  
Հայասները ոչ ասելով չըմբոստանան:

Բայց ոչ-ադավ հայասների մեծ մասն, ավաղ,  
Տարագնա մակույկներով օտարամետ,  
Մեկնում են այլ կղզիների ափերը պաղ,  
Որ հուսահատ ձուլվեն օտար ցեղերի հետ:

14.12.2015 թ.



**Արևագալի երգ-աղոթք**

1. Տայգն է պայծառ արշալույսի.

Մարե, նար-նար անափ սեր,

Հարե, Հարե, վառ հույսեր:

Արուսն ելավ սարի ուսին.

Մարե, նար-նար անափ սեր,

Հարե, Հարե, վառ հույսեր:

2. Թող շողշողա անմար Արփին,

Մարե, նար-նար սիրառատ,

Հարե, Հարե լուսառատ:

Արի Արան, սուրբ Կումարբին.

Մարե, նար-նար սիրառատ

Հարե, Հարե լուսառատ:

3. Թո՛ղ սրտերում Լույս արարվի,

Մարե, նար-նար քաղցրաշուրթ,

Հարե, Հարե բարեգուրթ:

Խավարն անհետ թո՛ղ վտարվի,

Մարե, նար-նար քաղցրաշուրթ,

Հարե, Հարե բարեգուրթ:

4. Թո՛ղ հուրհրա Ոսկեդարը

Մարե, նար-նար անափ Հույս,

Հարե, Հարե բարի Լույս:

Լույսն է բարի, Լույսն արդար է.

Մարե, նար-նար անափ Հույս,

Հարե, Հարե բարի Լույս:

## Աղօթք ընդ ձնաբուքն

Ձնաբքի շնչով  
Անմիտ երթն է սաստված  
Եվ անպտուղ շաչող  
«Ոչ»-աճարակ եռքը:  
Շնորհակա՛լ ենք, Աստված,  
Մնաց, որ չմերժենք  
Քո ուղղորդող, օգնող  
Եվ հոգածու Ձեռքը:  
Կընթանանք Քո Կամքով,  
Պահանջատեր ջանքով,  
Եվ թող չաղավաղե՛ն  
Ձայնը բազմաց, ԱՄԵՆ:

## Աղօթք ընդ ձմեռնամուտն

Վառողի հոտով տաք քամիներ են  
Թափանցում Հայոց սահմաններից ներս,  
Կարիճներ, օձեր, հարամիներ են  
Սողոսկում Հայոց դուռ ու փեղկից ներս,  
Եվ մեկը՝ բարձր աթոռին բազմած,  
Տենդագին ծածուկ դավեր է նյութում  
Ընդդեմ Քո Կամքի և ձայնի բազմաց:  
Հաղորդի՛ր, Հայր մեր, չարին ամլություն,  
Պաղ շնչով մարի՛ր ձմեռնամուտի  
Գոլ հոսանքները, կրքերը մթին  
Եվ մի՛ թող, որ մեր սրտերում հառնեն  
Քենը, կասկածը և ահը, ԱՄԵՆ:

## **Աղօթք ընդ շառագոյնս**

Աշնան առավոտ է՝  
Ցայգալույսի հուրքից  
Շառագունած ամպեր,  
Շառագունած այգի,  
Շառագունած ճամփեք,  
Երագախաբ կրքից,  
Քնահարամ վարքից  
Շառագունած մարդկանց  
Շառագունած այտեր...

Հեռու՛ պահիր, Աստված,  
Շառից ու փորձանքից,  
Շառագոյնի հանգոյն  
Մի՛ թողնի մեզ անտեր,  
Անարև ու անտուն...

## **Աղօթք ընդ մնացեալն**

«Շառագոյնը» փաստված,  
Ու վտանգն անցած է,  
Շնորհակա՛լ ենք, Աստված,  
Մնաց մնացածը...

## Աղոթք Երախտագիտության

Շնորհակա՛լ ենք, կենսաշնորհ Հայր,  
Ո՛վ, մշտանորոգ Մեր հավերժասփյուռ  
Եվ բազմապարույր Անսահմանություն անընդգրկելի.  
Ներողամի՛ տ ես բարությանբ անբիծ  
Մեր իելակորույս, մանկամիտ վարքի,  
Մեր նյութամեծար փորձությունների  
Եվ պատրանքածին կրքերի հանդեպ,  
Որ գահավիժող ոլորանների խոտոր ընթացքով  
Մեզ հեռացնում են արարչապարզ Հայրական Տնից  
Եվ Քո սուրբ գրկից ու գորովանքից:

Երախտապա՛րտ ենք, սիրագորով Հայր,  
Ո՛վ ամենատես, մշտարթուն Վկա  
Եվ արդարադատ Երկնի Դատավոր անկաշառելի.  
Հավատը, Հույսը և Մերն են միայն,  
Որ կփրկեն մեզ դեգերումներից դառը և ունայն,  
Կմաքրազարդեն մեր հոգիները փորձության աղտից  
Եվ պայծառացման Լույսիդ շնորհով  
Նորից սուրբ գիրկդ կբերեն, ԱՄԵՆ

## ՉՍԵՐՏՎԱԾ ԴԱՍ

Թուրքն ուզում է ջարդի, փրթի  
Ու հասցնի նոր հարված,  
Իսկ հայն էլի ծոտի-պռտի  
Բաներով է զբաղված:

Փոխում է մի ղեկավարի  
Է՛լ ավելի ստորով,  
Որ այդ մե՛կն էլ էշավարի  
Գերվի խոտ ու ախոռով:

Հետո Աստծուց կբողոքի,  
Թե իր հողում ամայի  
Ինչու՞ այսքան իրար կողքի  
Խեղված դիեր կան հայի...

Հաճելի չէ՞ր խոսքս քիմքիդ,  
Ո՛վ, հայորդի՛ արիածին...  
Ապավինիր միայն զենքիդ՝  
Նման արծվի, առյուծի:

Թու՛րքն է կրկին քո թշնամին,  
Թու՛րքն է զավթել քո հողը,  
Թու՛րքն է այսօր, հենց այս ժամին  
Քո դեմ նոր դավ նյութողը:

02.12.2015 թ.

## ՋԻՀԱԴԻ ՁԱՀԱԿԻՐԸ

Ջիհուդն էլի ջահակիր է ջիհադի,  
Որով երրորդ մեծ Սպանդն է բորբոքվում,  
Եվ ծպտյալ «Աբու Բեքր ալ-Բադդադին»  
Յուղ է վառում Անկարայում ու Բաքվում:

Նույն բառը չե՞ն արդյոք «ջիուդ» ու «ջիհադ»...  
Ո՛վ, մոլեռանդ մուսուլմաննե՛ր աշխարհի,  
Արկ ու ռումբի միս եք դառնում անընդհատ,  
Որ ջիուդը արյուն խմի, կայտառի:

26.11.2015 թ.

## ՀԱՅԻ ՀԻՆ ՀՈԳԻՆ

Մի չար աչք է հոգուս թասը հնում նայել,  
«Կործանումս» կանխանշել ու հմայել.  
Նմանվել եմ հաճախ չարքի սոսկ արտաքուստ,  
Հոգիս շա՛տ է կրել նման արտահագուստ:  
Հին հոգի եմ՝ տառապագին փորձառությամբ,  
Եվ մարմնական զենիս անխախտ գործառությամբ.  
Չեմ նախանձում Բանսարկուին, իզուր ք ջանաց,  
Ներողամիտ չե՛մ լինի էլ բյուր հանցանաց...

ՀԱԶԻՎ ԹԵ...

Հրեշտակաթև աղավնիների  
Երամ է կանուխ դունդունում բակում.  
Մփռփա նք է սա, ավետի՞ս բարի,  
Ոսկեդարի հն՞ք հրաշապատում...  
Ավա՛ դ, Տերը մեզ հազի՛ վ թե ների  
Հոգեկեղեք այս Սարդարապատում,  
Երբ հենց մեր ներսի ենիչերներին  
Չենք զատում, դատում ու մեզնից հատում:  
19.12.2015 թ.



«Ի ՄԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ»

Արարածների ամեն մոլորակ  
Աստծո այն «Բանն է  
Ի սկզբանէ»,  
Որն անհունի ու հավերժի Արքան  
Արտաբերում է միայն մեկ անգամ:  
Եվ երբ Բանն արդեն արտաբերված է,  
Ոչ մի առանձին էակ զանգվածեղ՝  
Լինի դա քուրմ, մոգ թե հզոր արքա,  
Ի վիճակի չէ Աստծո հետ խոսել  
Կամ հոդաբաշխ խոսք Նրանից լսել:

Տիեզերական, գալակտիկական,  
Համակարգային, մոլորակային  
Զարմանահրաշ ու անզուգական  
Աստծուց առաքված էակներ կային,  
Միշտ էլ կլինեն, հիմա ևս կան,  
Որոնք բերում են նպատակային  
Ու կողմնորոշիչ ուղերձ ու պատգամ:

Խնդրեմ, կարող եք նրանց հետ խոսել,  
Տարբեր կրոններ, ուսմունքներ հյուսել,  
Հավատալ դրանց, ժխտել ու եղծել,  
Անդուլ քարոզել, հերքել ու պղծել,  
Կոչել գիտական, հակագիտական,  
Բայց... Բանն ասվում է միայն մեկ անգամ:

«ԻՄԿԱՆԴԵՐԸ»

Ա՛խ, այս փքված «Իսկանդերը»...  
Տեղով փորձանք է անտերը.  
Որտե՞ղ իսաղա սա իր դերը,  
Քանդի ու՞մ շենն ու հանդերը...

Լինի մի թիզ, թե մի հեկտար՝  
Մեր հողերն են, թուրքին չե՛նք տա.  
Սուրբ հողեր են, չարժե՛ ձեռք տալ,  
Ջարդել քարե թեկուզ մեկ սալ:

Մեր զենքն ուրի՛շ պիտի լինի,  
Աննկատ ու անընկճելի՝  
Օտար տարրի հեռացումով,  
Բնիկների գորացումով:

Ա՛յ, դա խելոք մարդու գործ է,  
Տխմարն է միշտ ոմբակոծել.  
Իսկ երբ մի տեղ լացուկոծ է,  
Հույսի, Լույսի ճամփան գոց է:

Մեր կողմից են, եթե թուրք չեն՝  
Արարումի ջիդից գուրկ չեն,  
Փաշաների բութ ստրուկ չեն,  
Ջիհադիստ ու մութ սզրուկ չեն:

Իսկ ու՞մն է այս «պահելիքը»...  
Թե որ պայթի՝ մահ է լիքը,  
Թե չպայթի, ո՞վ է տերը.  
Օտարինն է, ոչ թե մերը:

24.10.2016 թ.

ԿՐԿԻՆ ԿԳԱՆ

Ձեր խաղերը քաղաքական,  
Կռիվները բողոքական  
Այսօր թե կան,  
Վաղը չկան:

Իսկ Լույսերը տարածական  
Եվ Սերերը հալածական  
Կրկին կգան  
Հավերժական:

25.01.2018թ.

## ՉԸՆԹԵՐՑՎԱԾ ԳՐԵՐ

Ամեն երակ՝ մի տող,  
Ամեն տերև՝ հյուսվածք  
Եվ աշնանը միտող  
Լուսումնոթի պատմվածք:

Պատմությունը, անշուշտ,  
Ծառի բունն է կրում,  
Թեև ամեն աշուն  
Տերևներ է ցրում:

23.01.2018 թ.

## ՔՆԱԾ ԱՌՅՈՒԾԻՆ

Ո՛վ, քնած առյուծ, արդյոք մինչև ե՞րբ  
Չի հնչի ահեղ քո մոնչյունը,  
Դեռ որքա՞ն օտար ոհմակներին լիրբ  
Չի խրտնեցնի շնչառությունդ:

Այդ ի՞նչ դյուրական տեսիլք է շարժվում  
Նհինջով ծանրացող կռպերիդ ներքո,  
Որ սուրբ բնագդով չես զգում, հաշվում  
Հերթով հոշոտվող կորյուններին քո:

Չե՞ որ գայրացկոտ մեն մի հայացքդ  
Ցիրուցան կանի ոհմակը վայրի,  
Իսկ քո տիրական խրոխտ քայլվածքը  
Նրա գաղջ հոտի հետքերը կայրի:

31.01.2018թ.

## ՕՏԱՐ ՍԵՐԻԱԼԻ ԿԵՂՏԱԶՐԵՐԸ

Բուրում են անգամ հեռատեսիլով կեղտաջրերը,  
Որ չկամորեն իրենց են քաշում քաղքի տերերը:

Արդ, գարշահոտից զուր է տրտնջում Վարդագարյանը.  
Իրենից առաջ նույն հոտն է շնչել պոետ Զարյանը՝  
Նա, ով աջակցեց, որ բանտը նետեն ըմբոստ Չարենցին՝  
Մորթապաշտական իր մատնագիրը կցելով գործին:

Այսօրվա օրով բանտում են հերոս Սասնա ծռերը,  
Քաղքի տղերքն էլ թող որ ըմբոշխնեն կեղտաջրերը:

14.02.2018թ.

## ԵԹԵՐԱՀՈՒՅՍ ԵԹԵՐԱԹԻՌ

Եվ եթե ես, և եթե դու,  
և եթե մենք կամենանք,  
հաստատապես եթերատես  
եթերագենք կունենանք:

Եվ եթե ես, և եթե դու,  
և եթե մենք միանանք,  
անտարակույս եթերալույս  
եթերաթիռ կունենանք:

Եվ եթե ես, և եթե դու,  
և եթե մենք չընկրկենք,  
եթերածով ճառագայթով  
մոլորակը կգրկենք:

Եվ եթե ես, և եթե դու,  
և եթե մենք ճառագենք,  
խավարացիք արարածին  
անէացում կառաքենք:

## ԱՐՑԱԽՅԱՆ ՏՆԳԼԲԱԶՈՒԹՅՈՒՆ

- Անաստա՛ս, դու էջի գլուխ ես...

Մարտիրոս Մարյան

Թավշի բոշեն ինքը էջ է՝  
Ուրիշներուն էջ կքշե:  
Աստ ր աշե...  
Էջ են ու էջ՝ էջի պապան,  
Մի անկշտում քոչվոր ալբան  
Եվ փալանփոխ դերվիշ բաբան:  
Է՛ջը կասի, թե Արցախը  
Ինքնորոշվել ու անկախ է:  
Այդ չորս էջին ահա նշել  
Եվ ասում եմ՝ բարև, էջե՛ր...  
(Արցախյան մեծ իշանց ճյուղին  
Բարև հղեց Պըլը-Պուղին,  
Երբ, իր անմահ էջին նստած,  
Երկնից մի օր իջանեց ցած:  
Այդ օրն այնտեղ ընտրություն էր  
Եվ արտակարգ «շուստրություն էր».  
Տեղ-տեղ անլույս մթություն էր,  
Որտեղ լույս կար՝ բթություն էր:  
Հաղթեց Մելիք Շահնազարը,  
Գոհ են ցարն ու Քաջ Նազարը,  
Փանահ Ալին, Անաստասը,  
Բուշնիկյան ամբողջ դասը:  
Ապշահար են Նախշուն Բաջին  
Եվ Խաչանը Տըմբլաչի,  
Թե որքա՛ն շատ էջի գլուխ  
Եղան հայոց երկրի գլուխ...)

07.05.2020թ.



## ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

Պոետներ եք ձեզ կարգել  
Անտաշին ու պոռնիկին.  
Էլ ձեզ ինչպե՞ս ես հարգեմ,  
Ինչպե՞ս մնամ ձեր կողքին...  
Ակա՞նջ կախեմ ձեր խոսքին...  
Մա՞սը դառնամ կույր հոսքի...

Կրթվեք, ինչպես ուզում եք,  
Մերտեք այն, ինչ լսում եք:  
Ես այստեղ չեմ, ես չկամ.  
Հինգ դար անցնի, նոր կգամ:

03.08.2020թ.

## ԱՇՆԱՆԱՄՈՒՏԻ ՀՐԱԺԵՇՏ

Տերյանական անուրջները ցիրուցան  
Ե՛վ իմ մեջ եմ, ն՛ այն դալուկ աղջկա.  
Ո՞վ ամայի, արձակ դաշտով հեռացավ...  
Ե՞ս եմ... Դո՞ւ ես... Ես էլ դու եմ, ես չկամ:

01.09.2022 թ.

## ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Թուրքն ուզում է ջարդի, փրթի,  
Հայից խլի նոր հատված,  
Իսկ հայերս ծռտի-պռտի  
Բաներով ենք զբաղված:

Դավաճանին ով պարսավի,  
Կտուգանվի հինգ միլիոն.  
Շա՛տ ճարպիկ է նոր հարամին՝  
Քաղտեխնոլոգ-քամելիոն:

Հաղթանդամ ու կերած-խմած  
Ինչքան հայ կա աշխարքում,  
Ուսադիր ու դիմակ դրած՝  
Դավաճանին է փրկում:

Անջատել են ուղեղները,  
Միայն փորն է աշխատում,  
Թափ են տալիս մահակները,  
Հային ծեծում ու դատում:

Իսկ թուրքի դեմ գնաց կովեց  
Խիզախ, անփորձ պատանին,  
Զոհվեց մարտում, չնվիրեց  
Իր սիրածին մատանի...

13.02.2021 թ.

## ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՔԸ

Մատանայապաշտ այլազգիները պիղծ ու զիշատիչ  
Իրենց արյունոտ ամփոփ մտքերը նվաճողական  
Միշտ ավարտում են կետ-վերջակետով:  
Վերջին մի դարում մեզնից խլեցին  
Սիսն ու Մասիսը՝ կետ-ստորակետ,  
Ապա մեր երկրից քարտեզի վրա  
Թողին կրծոտած մի ստորակետ:  
Վերջինիս պոչն էլ ուզում են մաքրել,  
Թողնել սոսկ մի կետ՝  
Որպես գիշատիչ, նվաճողական  
Մտքի վերջակետ:  
Մակայն տարբեր են մեր նշանները  
Կետադրական:  
Կամոքն Աստծո և Մայր Բնության՝  
Մեր վերջին միտքը գուցե ավարտվի պայթյունավտանգ  
Այն երկու կետով  
(Միս ու Մասիսի հարևանությամբ),  
Որտեղ ուրանի ատոմն է ծխում՝  
Դեռևս խաղաղ ծուխն իր սփռելով  
Գալակտիկական ժայռանկարից մինչև Ծիր-Կաթին:  
Թերևս սա է մեր վերջին միտքը  
Իր վերջակետով, որ հետևանք է  
Դարեդար ձգվող Սարդարապատի:  
Փույթ չէ այլևս,  
Թե ո՞վ ում կատի,  
Ո՞վ ում կդատի  
Եվ ո՞ւմ կործանման սարսափ կպատի.  
Թող լինի Կամքը  
Տիեզերական Արդարադատի:

12.02.2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ո՛վ անճառ Մին*

- Անպեղծ ԱՍԱԾ...---3
- ԱՐԻԱՅԻ՛Ր, ԱՐԻ ԱՆՅԻ՛Ր...---4
- ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՆՅՈՒՄ---5
- ԱՆՈՒ-ԱՆԱ-ԿՈՉՈՒԹՅՈՒՆ---6
- ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՎ---7
- ՀՈԳՈՒ ԴԱՍԵՐԸ---8
- ՀՈԳՈՒ ԳԱՆՁԵՐԸ---9
- ՃՇԳՐՏՈՒՄ---10
- ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ---11
- ՆՄԱՆԱԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ---12
- ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ---13
- ՏՈՆԱԿԱՆ ՄԱՅԻՄ---14
- ՕՏԱՐԱՅՈՒՄ---15
- «Ո՛վ ԱՆՃԱՌ ՄԻՆ...»---16
- ՇԱՐ---17
- ՀՈՐՄ ՋԱՆՔԸ---18
- ՆԵՐԲՈՂ ՄԱՀԻՆ---19
- ՑԱՎ---20

*Կատակի կարգով*

- ԱՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ---21
- ԻՆՉՊԵՄ ՎԻՆԵՏՈՒՆ---22
- 100-ՐԴ ԿԱՊԻԿ---23
- ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՄԻ ՆՇԽԱՐ---24
- ԼԻԱԿԱՍԱՐ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ---25
- ՊԱՇՏՈՆԱԿՈՒՎ---26
- «ՈՒՂՏԻ ՊԱՐԸ ԿԱՄՐՋԻ ՎՐԱ Է ԲՈՆՈՒՄ»---27
- «ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ»---28
- ԱԳՌԱՎԱՔԱՐԻՑ ԱՌԱՅԺՄ ՉԱՐԺԵ ԴՈՒՐՄ ԳԱԼ---29
- ԲԱԼԼԱԴ ԳՆԴԵՎԱԶՑԻ ՌԵՎԱԶԻ ՄԱՍԻՆ---30
- ՓՈՂԻ ՔՍԱԿԸ---32
- ԻՉՈՒՐ ՋԱՆՔԵՐ---33
- ԱՐԴՅՈՔ ՈՎՔԵ՞Ր ԵՆ...---34
- ՌՈՆԴՈ ՍԻՐՈ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ---36

ՆԵՐՈՂԱՄԻՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ---37

«ԱՆՄԱՀ» ՏԵՄԻԼ---38

***Չկայացած Հանրաքվե***

ՀԱՆՐԱՔՎԵ---39

ԲԱՌԱՍԼԱՅՔ---40

ԲԱՐԵՇՐՋՈՒԹՅՈՒՆ---41

ԴՌՆԵՐՆ ՀՈՒՍՈ---42

ՀԱՅԻ ԲԱԽՏԻ ԱՆԻՎԻ ՇՐՋԱՆԸ---43

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ---44

ԽՈՊԱՆ---45

ԽՈՅԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ---46

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ---47

ՄԻ՛ ԵՐԿՅՈՒՂԻՐ---48

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ---49

ԲԱՎ Է---50

ԱՆՄԱՔՈՒՐ ԵՌՅԱԿ---51

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ---52

ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՔՎԵ---53

ԽՈՍՔ ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ---54

ԱՊՐԻԼԻ 24-ԻՑ ՀԵՏՈ---55

3D REALITY---56

ԱՂՈԹՔՆԵՐ---57

Արևագալի երգ-աղոթք---57

Աղոթք ընդ ձնաբուքն---58

Աղոթք ընդ շառագոյնն---59

Աղոթք ընդ մնացեալն---59

Աղոթք երախտազիտության---60

ՉՍԵՐՏՎԱԾ ԴԱՍ---61

ՋԻՀԱԴԻ ՋԱՀԱԿԻՐԸ---62

ՀԱՅԻ ՀԻՆ ՀՈԳԻՆ---63

ՀԱԶԻ՛Վ ԹԵ...---64

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ»---65

«ԻՍԿԱՆԴԵՐԸ»---66

ԿՐԿԻՆ ԿԳԱՆ---67

ՉԸՆԹԵՐՑՎԱԾ ԳՐԵՐ---68  
ՔՆԱԾ ԱՌՅՈՒԾԻՆ---69  
ՕՏԱՐ ՄԵՐԻԱԼԻ ԿԵՂՏԱԶՐԵՐԸ---70  
ԵԹԵՐԱՀՈՒՅՍ ԵԹԵՐԱԹԻՌ---71  
ԱՐՑԱԽՅԱՆ ՏՆԳԼԲԱԶՈՒԹՅՈՒՆ---72  
ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ---73  
ԱՇՆԱՆԱՍՈՒՏԻ ՀՐԱԺԵՇՏ---73  
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ---74  
ՄԵՐ ՎԵՐՁԻՆ ՄԻՏՔԸ---75  
  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ---76